

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով
Ո Ր Ո Շ ՈՒ Մ 16/4
17 մարտի 2018թ.

Քննարկվեց Ա/Ձ Հասմիկ Սիմոնյանի բողոքը ՀՀ ԿԱ ՊԵԿ Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 08.02.2018թ. N2138854 ակտի դեմ:

Ա/Ձ Հասմիկ Սիմոնյանի բողոքում բերված փաստարկները.

Ա/Ձ Հասմիկ Սիմոնյանը հայտնում է, որ Մասիս քաղաքի Հերացի 12/19 հասցեում զբաղվում է մանրածախ առևտրով: Հարկային մարմնի կողմից իրականացվել է ստուգում, որի ընթացքում կատարված գնումների դիմաց տրամադրվել են ՀԴՄ կտրոններ, սակայն այդ կտրոնների թղթյա ժապավենի վրա արտացոլված չի եղել ՀԴՄ կիրառողի անվանումը և հասցեն: Դա համարվել է օրենքի խախտում և 08.02.2018թ. կազմվել է N2138854 ակտը, որը ներկայացվել է 12.08.2018թ.:

Հսկիչ գնումներն իրականացվել են 2017թ. դեկտեմբերին:

Ա/Ձ Հասմիկ Սիմոնյանը նշում է նաև, որ իր կողմից առևտրի շրջանառությունը չի թաքցվել և ակտով արձանագրված խախտումը եղել է զուտ տեխնիկական խնդիր:

Ելնելով վերոգրյալից՝ Ա/Ձ Հասմիկ Սիմոնյանը խնդրում է ըմբռնումով մոտենալ խնդրին, չեղարկել ակտը և չենթարկել տույժ-տուգանքների:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության.

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության պետի 16.11.2017թ. N2138854 հանձնարարագրի համաձայն Ա/Ձ Հասմիկ Սիմոնյանի մոտ կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 08.02.2018թ. N2138854 ակտը (այսուհետ նաև՝ Ակտ):

Ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ 15.12.2017-28.12.2017թ.թ. ընկած ժամանակահատվածում Մասիս քաղաքի Հերացու փոխոցում գործող Ա/Ձ Հասմիկ Սիմոնյանի մոտ իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում, որի ընթացքում հարկային ծառայողների կողմից կատարված գնումների դիմաց հարկ վճարողի կողմից տրամադրվել են ՀԴՄ կտրոններ, սակայն տրամադրված կտրոնների թղթյա ժապավենի վրա արտացոլված չէր հսկիչ-դրամարկղային մեքենա կիրառողի անվանումը, ՀԴՄ-ի կիրառության վայրի հասցեն: Խախտվել է ՀՀ հարկային օրենսգրքի 381-րդ հոդվածի 3-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերի պահանջները: Արդյունքում ՀՀ հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածի 3-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն առաջադրվել է տուգանք 150.000 դրամի չափով:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել հետևյալը.

ՀՀ հարկային օրենսգրքի 381-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերի համաձայն՝ հսկիչ դրամարկղային մեքենա կիրառող կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները կանխիկ դրամով կամ պլաստիկ քարտերի միջոցով դրամական հաշվարկներ իրականացնելիս պարտավոր են ապրանքներ ձեռքբերողին, աշխատանքներ ընդունողին կամ ծառայություններ ստացողին տրամադրել հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոն, որի վրա պետք է տպագրված լինի՝

2) հսկիչ դրամարկղային մեքենա կիրառողի անվանումը (կազմակերպության անվանումը և կազմակերպատիրավական տեսակի հապավումը, անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի անունը, ազգանունը).

3) հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառության վայրի հասցեն:

ՀՀ կառավարության 05.10.2017թ. N1318-Ն որոշման Հավելված 3-ի 24-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Օրենսգրքով սահմանված պատասխանատվություն կիրառելու առումով՝ ՀԴՄ-ի կիրառության կանոնների խախտում է դիտվում օրենսգրքի 381-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ ՀԴՄ կտրոնի վրա տպագրման ենթակա որևէ տեղեկատվության (տվյալի) բացակայությունը (բացառությամբ սույն հավելվածով հաստատված կանոնների 25-րդ կետով նախատեսված դեպքի) կամ անընթեռնելիությունը (անզեն աչքով կտրոնի վրա արտացոլված տվյալներն ընթերցելու անհնարինությունը):

Սակայն, քննարկվող դեպքում սույն գործով որոշում կայացնելիս Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է հաշվի առնել նաև հետևյալ փաստական հանգամանքները.

ա) ստուգման ընթացքում գնված բոլոր ապրանքների դիմաց վճարված գումարներն ամբողջությամբ մուտքագրվել են ՀԴՄ և տրամադրվել են համապատասխան գումարի ՀԴՄ կտրոններ,

բ) վերը նշված ստուգումից հետո Ա/Ձ Հասմիկ Սիմոնյանի կողմից կատարվել են համապատասխան գործողություններ, որի արդյունքում տրամադրվող ՀԴՄ կտրոններում արտացոլվում են ՀՀ օրենսդրությամբ նախատեսված բոլոր վավերապայմանները:

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքները, Հանձնաժողովը գտնում է, որ բողոքը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով ՀՀ հարկային օրենսգրքի 443-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Անվավեր ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 08.02.2018թ. N2138854 ակտը:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ